


ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՈՒԿԱՆՅԱՆ

ՀԱՅՐԵԱՄՐՁ



ՀՅԵՆՏՏԵՐԱՆ

КНИГА ДОЛЖНА БЫТЬ  
ВОЗВРАЩЕНА НЕ ПОЗДНЕЕ  
УКАЗАННОГО ЗДЕСЬ СРОКА

891.99 | 11578

7-91 | 2 підшивки з.

Журнал № 3.

9 р.

9/III

9/III

452

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

891.99  
Ռ-91

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ 1961 թ.

# ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ

ԲԱՆԱՍՏԵՂՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ 578

A 28410



Հ Ա Յ Ա Գ Ա Ռ Ա Տ

Հ Ա Յ Ա Գ Ա Ռ Ա Տ

1947


ОВ. ГУКАСЯН  
СТИХИ

(на армянском языке)  
Арменгиз, Ереван, 1947 г.

ԽՄԹԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՂՄԻՑ

Հովհաննես Ղուկասյանը Հայրենադարձ բանաստեղծ է, Սովորական Հայաստան ներգաղթել է 1946 թվի հուլիսին: «Հայրենիքում» շարքը կազմող բանաստեղծությունները դրված են Երևանում, 1946—1947 թ., «Հայրենական պատերազմին» շարքի մեջ մտնող, ինչպես նաև «Հայրենաբանի» բանաստեղծությունները հորինված են 1937—1946 թ.թ.—իրանում: «Եատե Երգերը» և «Թարգմանությունները» վերաբերում են 1940—1947 թ.թ.:

25 III, 1947



# ՀԱՅՐԵՆԻ ՔՈՒՄ

## ԵՐԳՈՒՄ

Եվ պանդիմառթյան ցուպըս այրելով՝  
Ես կառ տենչելով հայրենիք մտա,  
Թափծից ազատված, ուրախ երգերով,  
Շաղկադաշտերով հայրենիք մտա:

Սո՞ւզ են հին կյանքիս հիշատակները,  
Արցունք-զրկանքի հիշատակները...

Բայց, ահա՛, ափիս հայրենի հողը, երդվո՞ւմ եմ ես Քեզ,  
Ահա՛, աշքերիս հայրենի շողը, երդվո՞ւմ եմ ես Քեզ:

Նվիրակա՞ն են վես կոթողները իմ հայրենական,  
Որոնք կմնան մեր հին օրերի տանջանքի վկան,  
Եբբ մեզ իմուլում էր դաժան կարիքը,  
Ու երազ թվում պայծառ գալիքը,  
Բայց Դու բուժեցիր տառապանքներից խոցված

սրտերը...

Հեռու վանեցիր դու նրանց արցունք, արյուն վզտերը,  
Ազատությո՞ւնն է իմ հայրենիքի հավիտյան տերը,  
Եվ մեր դաշտերից էլ մահ չի՛ բուրում,  
Շուրջըս ժապաւմ են ծաղկոց ու պարտեզ,  
Տե՛ս, մեկիկ-մեկիկ նրանց համբուլում, —  
Երդվո՞ւմ եմ ես Քեզ:

Հայրենակարձի կենսախինդ սրտով,  
Աչքերս արեին նոր Օբըս տեսա,  
Ես կաթի՛ ընկա հայրենիքըս ծով,  
Հույզերիս թեփն, նոր Օբըս տեսա.

Տենչերիս հասա հայրենի հողում,  
Հաղթական, ազատ հայրենի հողում:

Եվ ես սրտիս մեջ հայրենի հոգը, Հա՞յր, երդվում  
հմ Քեզ,  
Եվ ես հոգուս մեջ հայրենի բուշը, Հա՞յր, երդվում  
հմ Քեզ.

Նվիրակա՞ն է ներկայիս ամեն վայրկյանն ու հույզըս,  
Նվիրակա՞ն է ամեն նոր շենքի ոսկյա աղյուսը,  
Ամեն նոր թուփը, ամեն նոր հասկը,  
Ամեն նոր բացված ալբյուրի աշքը,  
Դարբնող մուրճերը, մեր ժամանակի անիվը ոսկյա,  
Դու փրկեցիր մեզ սրից, խորշակից, ճամփաներից քար,  
Քո արև սիրտը վանեց մեր հոգու գիշերը երկար,  
Էլ մենք պանդուխտ շենք օտար ափերում,  
Շենշող տներն են, ջա՞ն, ողջունում մեզ,  
Տե՛ս, մեկիկ-մեկիկ նրանց համբուլում,—  
Երդվո՞ւմ հմ ես Քեզ:

Ո՞վ Մհծ Բարեկամ հայ ժողովուրդի,  
Ինչպես նոր սերունդ, Քո փառքը կերպիմ,  
Իբրև զինվորըդ ու պոհտ որդիդ,  
Արշալույսներում Քո փառքը կերպիմ.

Հզո՞ր է երգը լույս ապագայի,  
Այսօրն է ձեռքը լույս ապագայի:

Եվ ես նոր կյանքիս լուսաշող սեմին, Հա՞յր,  
Երդվում հմ Քեզ,

Հանուր աշխարհի վառ լուսագեմին, Հա՛յր,  
հրդվում հմ Քեզ.

Նվիրակա՞ն է Քո ճանապարհը, որ ծնունդ տուավ  
Հանուր սրտերից,  
Նվիրակա՞ն է Քո ամեն բառը, որ կրակ տուավ  
Հանուր շրթերից,

Որ մեզ կոչում է անհերում մարտի  
Հանուն ճշմարտի, տառապած մարդի,  
Սովոր աշխատանքի ազատազրման.  
Փա՛ռք Քեզ, Զորավար, Առաջնորդ անձահ,  
Փա՛ռք անցած ուղուդ, Արևիդ անմար,  
Կուռ Բանակներդդ Ա՛րևն են գնում,  
Դրոշներդդ սուրբ, դրոշներդդ վես,  
Տե՛ս, մեկիկ-մեկիկ նրանց համբուրում,—  
Երդվո՞ւմ հմ ես Քեզ:

Երևան, 1947

## ԼԵՆԻՆԻ ԱՐՁԱՆԻ ԱՌԴԵՎ

Այս իմ աշխարհուն է, քաղաքն այս խնդում,  
Այս իմ երազուն է, պատվանդանն ի վեր,  
Այս իմ նոր կյանքն է, կյանքն իմ սրտում,  
Իմ դեմ լուսափառ կենդնն է հավերժ:

Մարդ չքանդակեց արձանը նրա,  
Դարերի կամքն է պատվանդանը սեգ,  
Քայլե՞ր իմ, հիշե՞ք ճամփերի վրա  
Երթն այս անսահանչ ու այնպես անցեք:

Հաղթաբազո՞ւկ է, կուռ ծեռքերի մեջ  
Հուրն իրավունքի և կամքն աներեր,  
Զեռքե՞ր իմ, հիշե՞ք ճալիքն անսահման,  
Որ կերտեք բարին, չարը չներեք:

Արեգնաբե՞ր է երկնքի նման,  
Անհուն իմաստուն, ճակատը միշտ վեր,  
Ազե՞ր իմ, հիշե՞ք դալիքն անսահման,  
Դարունն անսահման, նա' է ձեզ տվել:

Սիրտ իմ, սլացի՞ր պատմանդանն ի վեր,  
Ու հպի՞ր սրտին այդ արեգնային,  
Այնտեղ կդանես երգեր դու հավերժ,  
Այդ սրտով ապրի՞ր, ու միշտ վեր նայիր....

Երևան, 1946

## ԱՆԱՊԱՏՈՒՄ ԾՆՎԵՑԻ ԵՍ

Անապատում, անապատում ծնվեցի ես,  
Մարավ էինք, մայրս աղբյուր՝ փնտրեց իզուր,  
Ես մնացի ջրի կարստ սափորի պես,  
Ու մայրիկիս ես շտվի կաթիլ մի ջուր.  
Կաթիլ մի ջուր ես շտվի մորըս պապակի,  
Ու շհասանք մենք կարեկից ապաստանի,  
Միայն դուք մեզ ջուր տվեցիք, զինզ, անապակ,  
Ո՞վ աղբյուրներ, ծով աղբյուրներ Հայաստանի:

Կանաչություն, կանաչություն շահսա ես,  
Եվ անոթի մայրս արտեր փնտրեց իզուր,  
Ես մնացի հացի կարստ մաղախի պես,  
Եվ մայրիկիս ես շտվի հաց մի իշուր.  
Փշուր մի հաց ես շտվի մորըս անգին,  
Ու շհասանք մենք հացառատ անդաստանի,  
Միայն դուք մեզ հասեկիր տվիք, վառ, թանկագին  
Հասուն արտեր, նազուն արտե՛ր Հայաստանի:

Հանգստություն, երջանկություն շտեսա ես,  
Եվ հոգնատանց մայրս օջախ փնտրեց իզուր,  
Ու թախծեցի իս խեղճ երգիլ բեղմինի պես,  
Մորս զլիին մթնեց երկինքն անգամ լազուր,  
Եվ երազում իսկ շտեսանք տաքուկ մի բուն,  
Ու շգտանք հյուրընկալող մի սուրբ տանիք,  
Միայն դուք մեզ ձեր դիրկն առաք հայրենի տուն—  
Ո՞վ քաղաքներ, նոր քաղաքնե՛ր Հայաստանի:

## Ս Ա Ն Ե Տ

Ես ցանկացաւ երգել պայքար, սեր անվերջ,  
Այսօր, ահա՛, հրե դարեղն են իմ զեմ,  
Եփ այս երգըս վազորդյանիս երգն է դեռ,  
Պանդխտության խավար բանտըս կործանվեց:

Ես ցանկացաւ երգել երգեր անարցոնք,  
Այսօր, ահա՛, երգում եմ երգն իմ երգոց,  
Թախոծի համար սրտիս դուռը հավերժ գո՞ց,  
Ես ելում եմ երգահանդես մի բարձոնք:

Ես ցանկացաւ երգն իմ կյանքից առավել,  
Երգն էր, որ ինձ դարձնում էր կուռ ու վստահ  
Չոր ճամփեքին, ուր շատերն են ծարավել.

Այսօր, ահա՛, ես երգերով իմ հստակ,  
Իմ վեհանիստ ու հաղթական մայր հոգում  
Սովիտական հալլենիքս եմ՝ ներբողում...

Երևան, 1946

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Եմ զե՞ս հայրենիք, աշխարհ բարձրագահ,  
Անապատներից պիրկդ եմ եկել, աես,  
Երկար եմ տանջվել հեռվում, բացակա,  
Բայց միշտ լսել եմ քո ձայնը սրտես:

Եղ երջանիկ եմ, թվում է ինձ՝ թե  
Ես միշտ ապրել եմ քո գրկումն ազատ,  
Որ քո գգվանքով հասակ եմ նետել  
Որդիներիդ հետ մեկտեղ հավասար:

Վշտերըս անցան քո մի համբուլով,  
Դու այնքան քաղցր ես, այնքան վեհ ու վես,  
Որ եթե կրծքիդ դաւնամ մի բոռ հող  
Խինդս ծազկի պես կծի սրտես...

Ֆրեան, 1948



Ազատ հայրենիք, թանկ ես ինձ համար,  
Քո հողը սրատ նից, զնո՞մ եմ համբուրել,  
Կյանք է՝ համբուրած հողում հող դառնալ,  
Երբ այդ սուրբ հողից վարդեր են բուրել:

Ի աչ փուլը որ դարեր կյանք չէք ունենա,  
Երբ հողը դժուլն գեմքս համբուրե,  
Բա՛վ է երգերից իմ՝ մի վարդ մնա,  
Եվ այն, հայրենիք, քո կրծքին բուրե...

Երևան, 1946

6

\*\*\*

Արարատը շողում է,  
Օդը ջինջ է ու մաքոք,  
Դաշտում հանգարտ լողում են  
Կոմքայնիրը հանց մակույկ:

Կյանքն է եռում եռանդոտ,  
Երգն է ծորում ապտերում,  
Կարմրազրոշ մի ավտո  
Ասկե խորձեր է բերում:

Հսկան նիզակը ուսին  
Կանգնած թիղում է, հեռում,  
Գործարան է, ու հեռից  
Այլակես է ինձ երեսմ:

Գառների հոտն է կամաց  
Շարժվում սարերի տակով,  
Պարտեզների մեջ կանաչ  
Տներ կարմիր գգակով:

Ինչպիս վարսագեղ փերի,  
Ուսիները նրբիրան,  
Առփի երկու ափերից  
Ճերմ համբուրում են իրար:

— Արարատյան դաշտավայր,  
Քեզ փարում եմ հոփի պես,  
Զա՞ն, արեգակ բոցավառ,  
Այլո՞ ինձ էլ հովիդի պես...

Երևան, 1946



Սեր գնարեցի, որտով սեր,  
 Մահ եկա աշխարհն անծիր,  
 Ա՛յս, այդ աշխարհն՝ իմը չէր,  
 Ով տեսավ ասաց՝ անցիր:

Լեզի ավին չքի տեղ,  
 Ասին՝ էս է, դիմացիր,  
 Ով հարռւատ էր, տեր ու աե՛ր,  
 Ջրկվածիս ասին՝ անցիր:

Տրորվեի ես պիտի  
 Ոտքերի տակ, ինչպէս ծիլ,  
 Թէ լը սեղմեր իր սրախն  
 Ինձ աշխարհն իմ երազի,

Գիտեմ, էլ շե՛ն դառնալու  
 Նեղ օրերըն իմ անծիր,  
 Բայց, ա՛յս, այն ժանտ աշխարհում  
 Ընկերներս մնացին...

Երևան, 1946



Քաղցր է պտտել ինձ անշափ  
Երկանում իմ անդին,  
Սև փոթորկից ելած ափ,  
Պայծառ են սիրոս ու հոգիս:

Երջանկությամբն իմ արքած,  
Թալլում, քայլում եմ անհագ  
Փողոցներով գրկաբաց,  
Գարնանային եղանակ:

Աչք եմ դառել ովզ հոգով,  
Նոր աշխարհն եմ մտել իմ,  
Բայց անցնողներն իմ կողքով  
Մրտիս վաղ են մտերիմ:

Եշնջում են մեկ-մեկու,—  
Հյուր է, օտար մի երկրից:  
— Ա՞յս, եղբայրներ, ո՞ւ երբեք,  
Հայրենադարձ մի երգիշ:

Եշնջում են մեկ-մեկու,—  
Պայծառ է դեմքն ու խնդուն:  
— Թույրեր, ինչպես լը շողա,  
Ճս համբայան դարձա տո՞մ:

Շշնջում են մեկ-մեկու, —  
Ա՞յլ է մայրըն կա տղիս  
— Ա՞խ, մայրիկնե՞ր, դո՞ւք եք, դո՞ւք,  
Մայրիկիս պանդուխտ թողի...

Պապը գրկած թոռնիկին  
Անց է կենում, նայում ինձ.  
— Են ես եմ ինչպես մանուկ,  
Հայրենի գրկում նորից...

Երևան, 1947

## ԵՐԳ ՆՈՐ ՏԱՆ ՄԱՍԻՆ

Սիրով՝ ներգաղքած շինարար եպբայլեներիւ

—Ո՞ւր ես գնում, —ասիր, հողը փորելով, —  
— ես գնում հմ ծնունդն երգեմ հասկերի,  
երգեր փնջեմ այս ծաղկավարս օրերով.  
Դու ժպտացիր ու խինդ ցոլաց աշքերիդ:

—իսկ ես, —ասիր,քահը ձիռքիդ մեջ ամուր, —  
Երգիշ ընկեր, տան եմ շինում, մի նոր տոն՝  
Ա՞հ, փարուղիցի կրծքիդ, —ընկե՛ր իմ անուշ,  
Իսկ ես, մի երգ, որ միշտ ապրի քո սրտում:

Եվ ես եղա մեր հասկերի աշխարհում,  
Տրակտորի հոնդումը լսեցի,  
Երեկոյան ասիր, — և աշխատում,  
Հիմքը փորվեց, դու քո երգը հյուսեցի՞ր:

Եվ ես նորից եղա սարերում մեր սեդ,  
Մարմար քարի, ժայռի սիրտը կիսեցի,  
Երեկոյան տուն դառնալիս ասիր,—ե՞կ,  
Պատերն ելան, դու քո երգը հյուսեցի՞ր:

Եվ ես նորից եղա անտառներում թավ,  
Սաղարթապատ տավիղներով հուզվեցի,  
Դարձիս ասիր, — Երգի՝ և արկը մտավ,  
Հարկը ծածկվեց, դուք քո երգը հյուսեցի՞ր:



Ու երբ դադրած շափում էի դաշտ ու ձոր,  
Հանկարծ, հանկարծ, ընկեր, ևս քեզ հիշեցի.  
Երբ ինձ տեսար՝ ասիր,—Ընկեր երազող,  
Տունս շինվեց, դու քո երգը հյուսեցի՞ր:

Վեր նայեցի, թնդաց սիրտը ու եռաց,  
Տեսա տունըդ մայրամուտում հրացայտ,  
Մասիսն իր դեմ, ինչպես անմահ մի երազ,  
Տունդ իմ դեմ ու տանըդ դեմ կռացա.

Ու վերցրեցի պրիւլն իմ ցողաթուրմ  
Ու հյուսեցի այն որ ծնվեց իմ սրտում,  
Ընկե՛ր, երգըս քո նոր տան մեջ հյուսեցի,  
Որ քո սի՛րտն է, ես քո սրտով հոգվեցի...

Երևան, 1947

## ԵՐԵՎԱՆԻ ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ

Քայլենք, քայլենք միասին, անդին, անդին ի՞մ մանկիկ,  
Այս պողոտան իմ սիրտն է, ու իմ հոգին, ի՞մ մանկիկ,  
Ես կսեղմեմ քեզ կրծքիս, որ սրտիս հուրը զգաս,  
Արովյանի պես կսիրեմ քեզ կաթոգին, ի՞մ մանկիկ:

Ահա այսպես դեպի վեր, նոր փողոցներ, լուսաբաց,  
Արծաթափայլ առուներ, լուսամուտներ գրկաբաց,  
Թղկենիներ զուգահեռ, օ՝, նրանց բույրը զգա,  
Մեզ գարունն է ողջունում կամար կապած, ի՞մ մանկիկ:

Տես, կանչում է մեզ, դնա՞նք, դնա՞նք այսպես շրջելու,  
Աշխատանքի, կառուցման ոսկեփոշին շնչելու,  
Այս արկից գալիքի անուշ համբույրը զգա,  
Փողոցներում այս պայծառ, մո՛տ է հեռուն, ի՞մ մանկիկ:

Ծովենք վերջին փողոցն այս, մի՛ նեղանա, ի՞մ մանկիկ,  
Երբ ևս երգեմ մի թախծոտ, հին եղանակ, ի՞մ մանկիկ,  
Ինչ մաշող էր հին կյանքում, ինչ որ տիսուր էր կզգաս,  
Սա Տերյանի փողոցն է, մի՛ մոռանա, ի՞մ մանկիկ:

Երևան, 1947

## ԴԵՌ ՄԻ ՕՐԱԿԱՆ ԲԱԼԵԿԻՄ

Արամիկին

Բալիկ իմ, գեռ չգիտես,  
Որ ծնվել ես դու ազատ,  
Որ ծնունդ եմ տոնում ես  
Հայրենիքում հարազատ:

Ու չգիտես, որ եկա  
Ես տոթակեղ հարավից,  
Բալիկ իմ մի օրական,  
Եկա կյանքի ծարավից:

Ու ծնվեցի քեզ պես ես,  
Նորից, իմ անուշը բալիկ,  
Ու էլ երբեք սրտակեղ,  
Խավարում չեմ թափառի:

Մեր հայրենի հողում ջերմ,  
Կմեծնաս, կապրենք անդարդ,  
Ու մեր սերունդը կաճե,  
Ինչպես կանաչ մի անտառ:

Բալիկ, փախանք դիշերից,  
Սա ծնունդն է երկուսիս,  
Դու քո ծնունդն հիշելիս  
Հորըդ ծնունդն է՝ հիշիր...

Երևան, 1946

## ԴԱՎԻԹ ԲԵԿԻ ԲԵՐԴԻՑ

Ժայռակուրծք բլրի վրա  
Ես որոնում եմ մեկին,  
Այնտեղ բերդն է ավերակ,  
Մեծանուն Դավիթ բեկի:

— Ժայռե՞ր, ինձ վերև քաշեք,  
Ժայռե՞ր, բռնեք իմ ձեռքից,  
Դուք սիրել եք միշտ քաշե՞ր՝  
Եսկ ես, քաշերի երգիւ:

Ելնում եմ ժայռերն ի վեր,  
Բերդից նայում դեպի ցած,  
Կարծես նորից եմ ծնվել՝  
Զանգեզուրով Հիացած:

Մաղկած կոլխոզը, ահա՝  
Գիրկն է կանչում ինձ նորից,  
Բանակալին մի տղա  
Երգով անցնում է ձորից...

1947

(Քաջարանի ճամփին)

## ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ԵՂՆԻԿԻՆ

Թավշաբարուր ժայռերն ի վար  
Զրվեժի պես հերարձակ,  
Ժայռից իջար, Հե՞յ թխավարս,  
Ինձ տեսար ու հեռացար:

— Զանգեզուրի գեղեցկուհի,  
Կանգ ա'ռ, իմ սիրաը ժայռ չի,  
Զրվեժի պես հե՞յ, Հայռե՞ի,  
Դաս անցնես ել չի' սառչի...

Որսկան չեմ ես, սրտով բյուրեղ  
Բանաստեղծ եմ, մի վախի,  
Չեր սարերում այսօր հյուր եմ,  
Եղնիկ ասեմ, մի' փախիր:

— Զանգեզուրի սեալ եղնիկ,  
Զե՞ որ կանչել ես ինձ դու,  
Ես լսել եմ երգդ մեղմիկ,  
Երբ ինեղճ էի ու պանգուխտ...

Զանգեզուր, 1946

## ԽՈՒՍՈՒԹԱ ՍԱՐԸ

Քաջերի երկրում լեռներ արեկա՝  
Ամենից շողուն Խուստուպա սարը,  
Հին ու նոր փառքի ալևոր վիան—  
Քաջերի հոգում Խուստուպա սարը:  
  
Ոսոխի հանդեպ դարեր ու դարեր  
Քաջերն են կովել, հաղթանակ տարել,  
Բերդ քարափների սեփ թագն է դառել  
Այն թո՛չ ու բոհում Խուստուպա սարը:  
  
Եվ հիմա պայծառ երկնի տակ կապույտ,  
Ծեն կոլխոզների երկրում ծաղկաբույր,  
Արտերի ոսկյա գոտին է կապում  
Հանջերին բեղուն Խուստուպա սարը:  
  
Հիմա զարկում են հանքերում համառ,  
Պղնձի համար, աշխարհի համար,  
Խինդ են ջրվիժում գեսերն անհամար,  
Լույսով ողողում Խուստուպա սարը:  
  
Եվ ինչքա՞ն ինձ պես շատերը պիտ գան,  
Այս լեռների մեջ երգեն ապագան,  
Զանգեզուրցին է ասես լեռնական  
Խիզախ ու խոհուն Խուստուպա սարը:  
  
Հեռանում եմ ևս, հե՞յ, սարեր գոհար,  
Մեկ էլ ե՞րբ տեսնեմ Խուստուպա սարը,  
Օխշի շացի պես կոճակ առ կոճակ  
Սրտումս կտանեմ Խուստուպա սարը...  
Դափան, 1946.

## ՀԱՅԿԵՐ

Հայրենական արտերը ծով  
Մեզ հանել են կյանքի ափ,  
Խորտակելով քո նավը՝ սով,  
Հին աշխարհի դռւ սարսափ:

Ճա՞ն, հայրենի բարի հասկեր,  
Հողից ելաք ոսկեթագ,  
Մինչ բյուր դաժան թագակիրներ  
Եկան անցան հողի տակ:

Երևան, 1946—1947

I

Ներգաղքի օրերին, օտար ավելին  
մահացած հայրենարադա եղրորս. Սայտղի  
հիշատակին:

Անապատներից Հեռու Հեռավոր,  
Կարավանները Հայրենիք դարձան,  
Զառ Հավքերն անցան խնդում երաժով,  
Կարավանները Հայրենիք դարձան,  
Միրտ, տենչիդ Հասա՛ր, քեզ չեմ ասի որբ,  
Կարավանները Հայրենիք դարձան,  
Միայն մի շիրիմ մնաց մենավո՞ր,  
Կարավանները Հայրենիք դարձան...

Երևան, 1946

\*\*\*

Երազիս նորին պանդուխտ էի ես,  
Բորբ անապատում, երկրում օձերի,  
Անտուն էի ես, պանդուխտ էի ես,  
Եվ սիրոս այրվում էր վշտի բոցերում,  
Անտոնն էի ես, պանդուխտ էի ես,  
Ա՛խ, այս երջանիկ տնիցս հեռու,  
Անտուն էի ես, պանդուխտ էի ես,  
Աչքս շորացել, արցունքս էր սրտես...

Բայց երբ արթնացա, ա՛խ, կյանք իմ  
անուշ,  
Խինդս ծովացավ, հորդեց կրծքիս տակ,  
Իմ հայրինական ծուխն էր բարձրանում  
Աղավնու թևով երկինք կապուտակ.  
— Աղավնի, ասի, —  
Պանդուխտին հասիր,  
Ասա՛, կցնդե աշխարհն այդ օտար...

Երևան, 1947

## ՀԵՌՈՒ ՕՏԱՐ ՄԻ ԵՐԿՐՈՒՄ

Հեռու, օտար մի երկրում,  
Մի խրճիթում ամեն օր,  
Լուս իրար են հանդիպում  
Մի աղջիկ ու մի բանվոր:

Աղջիկը նոր լրի, սևաշխա,  
Տղան թուխ ու ամբակուս,  
Բայց խրճիթում սևացած  
Նրանք տիսո՞ւր են, տիսո՞ւր:

— Տա՛ր, սիրելիս, ինձ այնտեղ,  
Ուր արև կա ու կանաչ,  
Տա՛ր, սիրելիս, ինձ այնտեղ,  
Ուր ասպարեզ կա կանանց:

— Սիրելիս, այդ չեմ կարող,  
Կյանքը ուզես կտամ քեզ,  
Սիրելիս, այդ չեմ կարող,  
Ճամփես խավարը փակեց:

— Տա՛ր, սիրելիս, ինձ այնտեղ,  
Ուր գրկանք ու սուս չկա,  
Տա՛ր, սիրելիս, ինձ այնտեղ,  
Բաղուկներով քո երկաթ:

— Սիրելիս, այդ չեմ կարող,  
Տես, շղթաս կը շառաշի,  
Սիրելիս, այդ չեմ կարող,  
Բազուկներըս իմս չե՞ն:

— Ա՞հ, ուրեմն պիտ լամ ես,  
Խոցեմ ընդմիշտ սիրադ վերք,  
Մի՞թե, մի՞թե չը գիտես  
Արևաշող դու մի երգ:

Տղան Հանկարծ հրով մի  
Դառնում է բոց աղջկան.  
— Սիրտըս քոնն է, սիրելիս,  
Այստեղ ըմբուստ մի երգ կա:

Եվ թնդում է Հանկարծ սև  
Այդ խրճիթում երգ մի վեհ,  
Ծագում պայծառ մի արև,  
Կուռ բազուկներ ենում վեր,

Նրանց դեմքերն են լողում  
Ճաճանչների մեջ երգի,  
Նրանք քայլում են շողուն  
Դեպի դարուն մի երկիր:

Ու ամեն օր այդ պահին,  
Ներս է մտնում իմ հոգին  
Այդ խրճիթը խուլ ու հին,  
Փարվում նրանց կաթողին:

Երևան, 1947

# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

## ԿՈՎԿԱՍՍՅԱՆ ԼԵՇՆԵՐՈՒՄ

Հե՞յ, պիտի՞ք հիմա ուր կուղեմ լինել,  
Այնանդ, լեռներում, մեր սեգ լեռներում,  
Ուր արծիվները, իմ սիրելիներ,  
Կովկասի ազատ կրծքից են սերում,  
Որ աստղերից վեր, որ արեից վեր  
Ազատ, անարդել ճախրել են սիրում։

Հե՞յ, մատաղ նրանց շնչին մբրկալից,  
Հավիտյան ազատ, հավիտյան ըմբոստ  
Սեգ աբծիվներին իմ լեռնաշխարհի,  
Որ սուր կտուցով և աչքերով բոց,  
Բզկտում են սե սիրտը ոսոխի  
Ժայռերի վրա մեր հավերժական,  
Հանում ինքնիշխան մեր ազատ հողի,  
Եվ ազատության անխախու, վերջնական...  
• • • • •

Այդ ո՞վ է եկել,  
Եվ ո՞ւր է եկել,  
Ջարդո՞վ է եկել,  
Իզո՞ւր է եկել...  
Նա մեր լեռներից ներս չի' թափանցի,  
Եվ մեր հողերին չի' կարող տիրել,  
Ռուսաստանը մեծ, տափաստանն անծիր,  
Մենք հայրենիքը սրտով ենք սիրել,  
Կովկասի կրծքին նա կփշըվե,

Կովկասը երբեք սովոր չէ լծի,  
Կովկասի սուրը ժայռեր են սրել,  
Նա դեռ վրեժի ձայնը կը լսի...  
Կենան շանթասուր մրրիկները մեր,  
Վրեժ է կուտփում անգունղներում խոր,  
Կիշնենք լեռներից, ահեղ, սրամերկ,  
Կիշնենք դաշտերը մեր արյունաթոր,  
Ճեռու կրշենք ձեզ, ֆաշիստ շներ,  
Մեր հայրենիքից հավետ կկորչեք,  
Նա չի՝ պղծվելու, նա մեզ է սնել,  
Նա արծիվներին մարտի է կոչել...  
Լսո՞ւմ եք ձայնը մեծ Առաջնորդի,  
Կրեմի ձայնը, մեր սրտի ձայնը,  
Թող որոտ, կայծակ, թող արյուն հորդի,  
Մենք շենք վճարի օրերում ժանըր,  
Թե արյուն դառնան ողջ ծովերն անդամ,  
Եվ մեր լեռների ձյունը կարմրի,  
Ազա՛տ է աշխարհն իմ սովետական,  
Ազա՛տ է եղել, ազա՛տ էլ կապրի...

Թավրիզ, 1943

## Ա Զ Ա Տ ՈՒԹՅՈՒՆ

### I

Հե՞յ, հայրենի շողուն սարեր,  
Դուք որ ունիք ազատն արև  
եվ երկնասույդ գագաթներ սեգ  
իմաստության, դուք ինձ ասե՛ք,  
Աշխարհում ի՞նչն է բարձր ու վեհ  
ջեղնի՛ց էլ վեր, ձեզնի՛ց էլ վեր...

— Թե մեր սրտից գաս հարցնես դուն,  
Ազատությո՛ւն, ազատությո՛ւն...

Հե՞յ, հայրենի ջրեր զուլաւ,  
Դուք որ խնդուն ու կենսուրախ  
Բերթ ժայռերի կուբծքն եք բացել  
Խիզախորեն, դուք ինձ ասե՛ք,  
Աշխարհում ձեզնից զինջ ու պարզ  
ի՞նչն է կերթա հար ճանապարհ...

— Թե մեր սրտից գաս հարցնես դուն,  
Ազատությո՛ւն, ազատությո՛ւն...

Հե՞յ, հայրենի հավքեր անուզ,  
Եվ դուք, հովեր, մեղմ ու քնքուշ,  
Դուք որ մեր հողն արար կանցնեք  
Սավաննելով, դուք ինձ ասե՛ք,  
Աշխարհում ի՞նչն էր, որ վերին  
Խոյանք տվեց ձեր թևերին...

— Թէ մեր սրտից գաս հարցնես դուն,  
Ազատություն, ազատություն...

II

— Հե՞յ, հայրենի երգիշ խնդում,  
Քո քնարից հաղարալար,  
Սերն է փթթում տես, իմ սրտում,  
Հայրենիքիս ծաղկագալար.  
Ասա՛, ինչո՞ւ, ինչու ես էլ,  
Որ երգիշ եմ թեև պանդովստ,  
Չունեմ քեզ պես եռանդ ու սեր,  
Ու զգում եմ միշտ ինձ բանտում.  
Զէ՞ որ ես էլ կուզեմ քեզ պես  
Փառքը երգիշ մեր սարերի,  
Արծիվների թոփշքը վես,  
Խոխոջունը մեր ջրերի,  
Ինչո՞ւ, ինչո՞ւ, երգիշ, ասա՛,  
Մի՞թե մարդիկ չենք հավասար...

— Ա՞խ, իմ պանդովստ երգիշ ընկեր,  
Դու էլ կյանքի ես արժանի,  
Դու իմ հյուսած երգն ես երգիշ,  
Սահմանը մեզ չ' բաժանի,  
Բայց չես կարող, չես կարող դու  
Երգել ինձ պես խնդուն ու վես,  
Քեզ կխոցին սուր ու ժանիք  
Պանդխտության թախիծի պես,  
Քանի չունես, ա՞խ, չունես դուն  
Սովետական ազատություն...

Թավրիզ, 1942



Անմահ ժպիտով ննջում էր խաղաղ  
Հերոսն սպանված մի սեգ ժայռի տակ,  
Հրացանը կրծքին իր արնաշաղախ,  
Խոկ սրտի՞ն, որտին մի անսիրտ զնդակ:

Հողմերն ողբացին, անց կացան սակայն,  
Թուփապն արտասվեց, բայց նորեն անցավ,  
Միայն իր որդու կյանքն հերոսական—  
Մարող զնդակը մայրը շմոռցավ...

Քավոհ, 1943

# ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁԻ ԵՐԳԵՐ



Մի՛ վշտանա, մայրի՛կ, որ ինձ որբ ասեմ,  
Ինձ որբ ասեմ, երբ զու և ծեր հայրըն կաթ,  
Բայ է միայն, որ խոցված սիրտըս բացեմ,  
Դուք իմ անհուն ցավը, տանջանքը կզգաք:

Լցված ծանր, ահեղ վշտով պանդուխտի,  
Ես ձեր որդին, ասե՛ք, ասե՛ք ի՞նչ անեմ,  
Եվ ի՞նչ օգուտ վիշտըս հանձնել լուռ թղթին,  
Ինձ Հող է պետք, մայրիկ, վարդերըս ցանհմ:

Ինձ ծնեցիր՝ տիմիր երկրին այս օտար,  
Ծղթայլեցի օրենքներուլ ժանդուած,  
Ա՞հ, դժվա՞ր է, մայրիկ, դժվա՞ր, զատ դժվար  
Լինել պանդուխտ, լինել երդիլ մի թշվառ...

1987, օգոստոս,  
Թեհրան



Թախծում էի ես վշտով լի,  
ինձ մոռեցավ իմ սիրելին.

— Ա՞զ, մի՞թե դու երգեր չունես,  
Որ շախծես, շղժունես,  
Որ երկնքում անհուն, թեթև,  
ծողան աստղերը լուսաթիւ,  
Որ պաշտերում զեփյուղից զով  
կողան արտերը երազով,  
Որ սարերում երգի լու  
Զրվեժ դառնա ձյունը լուսե,  
Որ աշխարհում կյանքը անուշ  
Չասեն հեքիաթ է ու անորչ,  
Եվ լր լինի կարիք ու մահ  
Արեի տակ հավերժ անմար...  
Աւնե՞ս, երգի՛ր դու ինձ համար:

— Է՞զ, ասացի ես վշտահար,  
Սրոիս հպի՛ր, սիրաս ահա... .

— Դու պահել Հս նրանց սրտում,  
Եվ արտո՞ւմ ես, այդպես տրտո՞ւմ...

— Օ՛, ասացի, իմ սիրելի  
Ես պահպուխտ եմ և իմ սիրաը  
Տառապանքով, վշտով է լի...



Անսիրա այս երկրում ես ունեմ մի սեր,  
Որ շողջողում է իմ խավար ճամփին,  
Եվ ինչքան իշնե իմ հոգուն գիշեր,  
Նա կբոցկլտա ինչպես վառ արփին:

Չեմ գրում սերըս ավազի վրա,  
Ու չեմ հավատում օտարի ստին,  
Ա՞հ, սեր հայրենի, ցոլա', հոգհրա',  
Իմ խոցված սրտին, իմ կարոտ սրտին:

1937, ապրիլ 8,  
Թեհրան



Թեպետ օտար այս աշխարհում  
Կասեն գուր են Հույսերըդ,  
Ու նետել է վիշտն ինձ խարույկ,  
Բայց սիրոս ունի իր սերը:

Սովետական իմ Հայրենիք,  
Թո կարոտն է կրծքիս տակ,  
Թե որ կարոտն այդ ըլ լինի  
Կյանքն իմ սուստ է ու դատարկ:

1937, ապրիլ 2,  
Թհհրան

## Տ Ո Ն Ա Ծ Ա Ռ

Թուա ժազովրդին

Հյուսիսից բերված կանալ եղմնի,  
Հավերժ սպիտակ ձյուների զավակ,  
Կանալ մնացիր արնու եղեռնին,  
Թևակետ կացնի տակ քո սիրաը ցալաց՝

Մենք քեզ կպիրենք մեզ մոտ հարավում,  
Դու հավերժ խնդրու արդարության ծառ,  
Դու չե՞ս արտասվում, դու չե՞ս  
ալաւավում  
Դու նոր դարերի կանալ հուզարձան...

Թամբիկ, 1942

## ԴՈՒ ԶԵՍ ՀԱՍԿԱՆԱ

Գամկիթուրբյանն մեջ բանաստեղծ ընկերություն

Հոգնած ու դադրած և կիսանոթի,  
Բայց ուրախ երգ եմ երգում ևս կամաց,  
Ասում՝ զարմացած կյանքիս ծանոթին,—  
Իմ խնդությունը դու չես հասկանա:

Երկուսս էլ տանջված, մի ձամփի վրա,  
Ես պանդուստ, իսկ դու բանաստեղծ անտէ,  
Ուրախ երգ չունիս, և չես ուզում լավ,  
Բայց խնդությունս դու չես հասկանա:

Գիտեմ, ուզում ես կյանք տալ այս հոգին,  
Այս ծագկեն քո շուրջ պարտեզներ կանալ,  
Աւ կշտամբում ես մա՞ս երազողին,  
Բայց խնդությունս դու չես հասկանա:

Գիտեմ, ուզում ես արցունքը սրբել  
Մերկ մանուկների և անբախտ կանանց,  
Կյանք երգել ազատ, բայց երբեք, երբեք  
Իմ խնդությունը դու չես հասկանա:

Ճիշտ է, ընկեր իմ, հյուծվում ենք անթե,  
Թեձ էլ է հողն այս և՛ սառն, և՛ ամա,  
Խսկ ես դեռ պանդուխտ, ու մահն իմ առցն,  
Քայց խնդությունս դու չես հասկանա:

Ես մի հայրենիք ունիմ շողջողուն,  
Ազատ և խնդուն, անպարտ և անմահ,  
Քանի զողա արևն այս հողում,  
Իմ խնդությունը դու չես հասկանա:

Թափառիկ, 1942

## ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է վշտիս դեմ այն շերտը Հողի,  
Որ պիտ ծանրանա իւր լրծքին հանգած,  
Վիշտ շեմ ունենա և ոչ էլ հոգի,  
Երբ հյանքիս թելը կտրվէ ճանկարծի

Բայց ծունկի կիշնե իմ դեմ և մահը,  
Երբ հողը գրկեմ իմ Հայաստանի,  
Պանդուխու ապրելն է միայն իմ ցավը,  
Երկրում, շիրմումս էլ կլինեմ կինդանի...

Թավրիզ, 1841



— Զեզ հ'նչ երգեմ, օտար սարեր,  
Զեր ձխմերում սիրա կը ստոի,  
Դուք արև շեք բերում սրտիս,  
Դուք շե՛ք երգմի պանդովոտ շրթիս:

Մեր սարերում արև կա, Հե՛յ,  
Մեր սարերը փառքի զահ են,  
Մեր սարերում ձլուներ կան, Հե՛յ,  
Որ կյանքն իրենց, ազբյուր կանեն,  
Ու մեր սիրուց դառած շրվեմ,  
Կփշովին ժայռերի մեջ...

— Օտար սարե՛ր, ձեզ շե՛մ երգի  
Մինչ շշողաք փայլով ծեզի,  
Մինչ սարերի հետ մեր հասակ  
Չդառնաք մի սիրո շրթու,  
Հիմա կուզեք լա՛ցեք իմ դեմ,  
Կուզեք անդունդ բացեք իմ դեմ,  
Ես սեր կտամ մեր սարերին,  
Սիրոս հենել եմ մեր ժայռերին...

— Մեր սարերի հովեր, ո՞ւ եք,  
Եկեք պանդովոտիս Համբուրեք,  
Սիրոս մատաղ մեր կայծակին,

Մեր Հավքերին, արծվաճագին,  
Մեր զրվեմի սիրո երպին,  
Երազներիս տիեզերքին...  
Սիրոս կտամ մեր կայժակին,  
Մեր Հավքերին, արծվաճագին  
Որ սարերից էլ վեր տանին,  
Որ գարերից էլ վեր տանին,  
Այնտեղ, որ փառքն է ոսկեզող  
Սովետական Հայաստանի:

1943, Հուլիս  
Թագրիզ

# ԽԱՌՆ ԵՐԳԵՐ

## ԱԲՈՎՅԱՆՈՒՄ

Կարծես սրտիս, երկնից խնդուն,  
Սրեւ աշեր վայր ընկան,  
Ոչ ես տեսա Սրովյանում  
Իմ հայրենի աղջկան:

Կարծես սրտիս, թախծուտ ու որբ  
Դալուկ աստղեր վայր ընկան,  
Ո՞չ հիշեցի, այն հեռավոր  
Լացն էր պանդուխտ աղջկա:

— Մի լա, քույրիկ, մի լա անհույս,  
Իմ սրտում մի հեկեկա,  
Այնտեղ բացվեց վառ արշալույս,  
Անցավ դիշերն իմ երիար,

Ես էլ քեզ պես, քույրիկ անուշ,  
Պանդուխտ էի, տուն եկա...

Երևան, 1947

ԵՐԳ

Հեռու, ամայի  
Երկրում, հենց հիմա  
Կա մի հայ պանդուստ  
Աղջիկ մերձիման.

Ուզարկել է զիր,—  
«Հայրենիքից իմ  
Ինձ վարդ ուզարկիր,  
Որ ես չը մեռմի՞ մ...»:

Բայց ինչ անեմ, ա՞հ,  
Քաղում եմ, ահա',  
Լալիս է հիմա  
Վարդը վշտահար.

— Մի՛ պոկիր, տղա,  
Չեմ ծաղկի նորից,  
Ա՛խ, մի՛ բաժանի  
Դու ինձ իմ մորից...

— Մի՛ լա, — Ասի ես  
Ալ վարդին անուշ, —  
Նա էլ, օ՛, քեզ պես  
Մի վարդ է քնքուշ,

Նա էլ մեր պայծառ  
Մոլոն է արժանի,  
Ինչո՞ւ մահը շաբ  
Նրան բաժանի:

Երբ հասնեմ, ասի,  
Կաեղմի կրծքին,  
Կըդաք միասին  
Զեր մոր մոտ կրկին...

Երևան, 1947



Սրտիս ծաղկոցում երգերս են փթթում,  
Ե՛կ, իմ սիրելի, քեզ կրծքիս սեղմեմ,  
Վա՞յ նրանց, որոնք մենակ են պտառում,  
Ե՛կ, իմ սիրելի, քեզ կրծքիս սեղմեմ:

Չունեմ հս անթիվ դաշարներ ու գանձ,  
Իմ սրտի մեջ է Հայունիքս ամբողջ,  
Աշխարհն աղա՛տ, երջանիկ մարդկանց,  
Ե՛կ, իմ սիրելի, քեզ կրծքիս սեղմեմ:

Երևան, 1949

## ՆԵՐՉՆՉՄԱՆ ՊԱՀԻՆ

(Գրված Աւրմիա լճի վրա գիշերով)

Սպասի՞ր, ալիք, գեղանի ալիք,  
Ո՞ւր ես հեռանում, զրերին ձուզում,  
Թող շողա՛ խրոխտ բաշդ պանծալի  
Քո փշրվելով սիրոս է փշրվում:

Այդպես քո նման դեռ մի չերդված երդ  
Կորշում է անափ օվկիանում մտքիս,  
Եվ այստեղ ո՛չ մի, ո՛չ մի բարի ձեռք  
Զի՞ կարող նրան վերադարձնել ինձ,

Մինչ կտա նրան, գեղանի ալիք  
Ինձ հայրենիքըս, իմ մայրըս բարի...

1941

## ՎԵՐՁԻՆ ՆԱՄԱԿ

Ինձ լքում էիր... ես չգիտեի,  
Եվ գրում էիր կարգաս, կնետես,  
Կոտրան թևերըս, քեզ ո՞նց նետեի  
Ինչակս մի օտար իմ սիրող սրտես...

Սիրտըս հրդեհվեց, նամակու առի  
Ու տվի վերջին պատիկը շրթես,  
Վերջին նամակու էլ համբույրով վառի,  
Էն վերջին բոցն էր, որ ելավ սրտես...

Թավրիզ, 1934



Հավիտնմեռ Շիրազին

Տեսա քո մորը, Շիրա՞զ,  
Տեսա մայրիկին քո ծեր,  
Բաղիդ համար քո սիրած,  
Ալվան գուշպա կգործեր:

Ու աչքեսին նայեցի,  
Պայծառ էին նրանք գիռ,  
Եվ հավատա, չը ուեսա  
Այնտեղ վշտի ոչ մի թել:

Բայց հիշեցի մայրիկիս,  
Որ հետավոր պանդուխտ է,  
Հեռու իմ նոր բալիկից,  
Ցոր աշխարհ էլ չի մտել:

Շիրա՞զ, մորըս հիշեցի,  
Ալքեղի մեջ վշտի թել,  
Այդ թելով երգ հյուսեցի,  
Ան, նա շատ է կարոտել...

Երևան, 1947

## ՄՐԳԱՀԱՅԻ ԵՐԳԸ

Մրգահայս է, ճամփին խնդուն վեր է տանում այսինքը,  
Ուկեհատիկ վազերի տակ կյանք է բուրում մեր հոգն անուշ,  
Երշանկության երգեր ունեն Հայաստանում այսինքը,  
Քաղցր է բերքը համայնական, Տակինի պիս խաղողն անուշ:

Թե ուզում իս ոերն հայրենի՞ քո՛ էլ լինի չերմ ու հասուն,  
Թե ուզում իս քե՛զ էլ հիշեն երդիշները մրգահասուն,  
Ա՛ռ զամբյուղը այսի մտի՛ր, տե՛ս, վազերն էլ երգ են ասում,  
Հնդամյակի սիրո համար պայծառադեմ քաղողն անուշ:

Քաղի՛ր, ընկեր, լույս գալիքին մոտենում էս դու ժամեժամ,  
Քաղի՛ր, ընկեր, սի՛րտս քաղիր, նա քեզ հետ է միշտ, անբաժան,  
Քաղենք, երգենք մրգահասը, որ ալ գինուն լինենք արժան  
Սովհետական խնդուն կյանքի ոսկերերան թասովն անուշ:

Երգ իմ, գո՛ւ, էլ նման եղիր Հայստանի վաս ողկուզգին,  
Բառըդ քաղցրահամ թող լինի, որ լսողիդ սի՛րտը հուզի,  
Ժպտա ինչպես ալվան գինի, որ խմուզդ է՛լի ուզի,  
Հարսնիքների ծայրն է քացվում աշնան ոսկի թևովն անուշ:

Երեսն, 1947

# ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ե Ր Գ

(Ժուկավակուց)

Վարդերն են ծաղկում,  
Սիրտ, հանգստացի՛ր,  
Կփալեն շուտով  
Լավ օրեր անծիր.  
Զմռան հետ և քռ  
Թախիծը կերթա,  
Սիրտ, կպարզես դո՞հ,  
Գեղանի վարդով  
Բախտը կը ժպտա:

Վարդերն են ծաղկում,  
Սիրտ իմ, հուսա՛ դու,  
Կա՛, խոստանում են մեզ  
Այլ աշխարհ խնդուն.  
Այնտեղ հավերժ վառ  
Գարուն է անգին,  
Հովտում դրախտավայր  
Կյանքը մեզ մի այլ  
Վարդով կը ծաղկի:

Թավրիզ, 1940

## Ո Ո Մ Ա Ն Ս

(Թելվիզից)

Գեղեցիկ օր, բախտավոր օր,  
Ե՛վ արև, և' սեր.

Փալէց սիրտն իմ նորից նոր,  
Եւ չկա' ստվեր:

Զարթե՛ք, դաշտ ու պուրակ բաղում,  
Կյա'նք, հրդեհի՛ր ու եռա',  
Ի'մն է նա, ի'մն է նա,  
Այդ ինձ իմ սիրտն է ասում:

Պատուհանիս դեմ պատուղ ծիծեռ,  
Ի'նչ ես երգում գու աղատ,  
Գարնան հետ գու կանչում ես սե՛ր,  
Թհ գարուն երգում, ասա'。  
Բայց ո՛չ ինձ մոտ, առանց քեզ, մենակ  
Երգչի սերն է վառ, հասուն,  
Ի'մն է նա, ի'մն է նա,  
Այդ ինձ իմ սիրտն է ասում:

Թավրիզ, 1943

## Ծ Խ Ա Խ Ո Տ

(Պոլեմակից)

Ծխի՛ր, ծխախոտ իմ, վերացի՛ք  
Ծխամորձիցս հաճույքով,  
Ամպիկներով տարածիր  
Բուրիշ հոտըդ քո ծխով;  
Ոնց պարսկին քաղցր է զալան  
Կամ օշարակըն անուշ,  
Հոգուս դու քաղցր ես այնքան,  
Հեղանա՞զ, թեթև մշուշ...  
Ջրկեց բռնակալն ինձ կյանքից,  
Պատվից և ազատ կամքից,  
Բայց ծխում եմ նրա քինու,  
Ծխախոտս, քեզ ոնց հնում.  
Ծխում և խորհում.—Ոնց մաշվում ես  
Ծխախոտ, իմ ծխամորձում,  
Այնպես ինձնում մոխրանում է  
Վիշտն օրհասի և կորչում...  
Դեհ, ծխվի՛ր, սփռվիր անհունը խոր,  
Ծխով ալիքավոր և ախորժ,  
Եվ թե կարելի է, օ՛, անհետ տար  
Թեղ հետ և կյանքն իմ անվերադարձ...

Բայլրիդ, 1944



(Նեկրասովից)

Երեկ էր, ժամը վեցին,  
Մտա Դարմանի շուկան,  
Ուր անխիղճ մտրակեցին  
Մի գեղացի աղջկա...

Չէ՛ր ձկում ցավից նա իր,  
Մորակն էր շաշում ազատ,  
Մուսայիս ասի. — Նայի՛ր,  
Նա քո քույրն է Հարազատ...

Թավրիզ, 1942

ԹՈՎԱՆԴԱԿԱՒԹՅՈՒՆ

ԽՄՔԱԳՐՈՒԹՅԱՆ կողմից

էջ

3

ՀԱՅԲԵՆԻՔԱԿԱ

Երդում	5
Լենինի արձանի առջև	8
Անապատում ծնվեցի ես	9
Սոնետ	10
Հայրենիքիս	11
Աղաւ հայրենիք...	12
Արարտը շողում է	13
Սեր փնտրեցի...	14
Չաղցր է պտտել...	15
Երգ նոր տան ժամին	17
Երևանի փողոցներում	19
Դեռ մի օրական բարիկիս	20
Դավիթ բեկի բերեց	21
Զանգեզուրի եղնիկին	22
Խոստուզա սարը	23
Հասկեր	24
Անապատներից...	25
Երազիս նորեն...	26
Հեռու օտար մի երկրում	27

ՀԱՅԲԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՔՑՄԻՆ

Կովկասյան լիոներում	29
Ազատություն	31
Անմահ ժպիտով...	33

ՀԱՅԲԵՆԱԲԱՂՁԻ ԵՐԳԵՐ

Մի վշտանա, մայրիկ...	34
Թախուժում էի...	35
Անմիրտ այս երկրում...	36

Բնակչութեան օտարք...	37
Տոնածառ	38
Դու շես հասկանա	39
Հավերժություն	41
Զեղի ինչ երգեմ...	42

ԽԱՌԵՆ ԵՐԳԵՐ

Արովանում	44
Երգ	45
Արտիս ծաղկոցում...	47
Ներշնչման պահին	48
Վերջին նամակ	49
Տեսա բո մորը...	50
Մրգահասի երգը	51

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երգ (Ժուկովսկուց)	52
Ռոմանո (Դելլիոից)	53
Միախոս (Պոլեժակով)	54
Եղիկ էր... (Եհկրասովից)	55



Պատ. խմբագիր Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ  
Տեխ. խմբագիր Ի. ՎԱՐԴԱԿԵԱՆ

Գ.Ց. 03580 Պատուիք Ա 376, Տիրաժ 3000, ալ. 3<sup>3/4</sup> մամ., հեղ 1<sup>1/2</sup> ժամ.  
Հանձնված է արտադրության 27/VI 1947 թ.  
Սառարկված է ապագրության 25/IX 1947 թ.

ՀՅՍՌ Մինիստրների Սովետին կից Պոլիգրաֆ. Հրատ. և Վարչության  
№ 3 տպարան, Երևան, Ալավերդյան փ. 65, 1947 թ.

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220028410

ԳԻՒԾ 2 Ռ.

